



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«12» 03 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 15

**Ձեռնարկողը՝**

**<<ՌԱՌՈՒՌ>> ՍՊԸ**

22 Արարատի մարզ, գ. Ուրցաձոր,  
Մարզպետունու փող. տ. 27

**Գործունեությունը՝**

**Ուրցաձորի կավային ապարների երևակման փարածքում  
երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

**<< Արարատի մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝**



**Վ. Սահակյան**

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 15

« 12 » 03 2018թ.

**ՀՀ Արարատի մարզի Ուրցաձորի կավային ապարների երևակման տարածքում  
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	<<ՌԱՈՒՌ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ, կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	<Գ> կատեգորիա
Տեղադրման վայրը՝	<< Արարատի մարզ

Ուրցաձորի կավային ապարների երևակման տարածքը գտնվում է << Արարատի մարզում՝ Ուրցաձոր գյուղից 1.5 կմ դեպի հյուսիս և Շաղափ գյուղից մոտ 7.5 կմ հյուսիս-արևմուտք: Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տեղամասը ներառված է Ուրցաձոր համայնքի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են Գոռավան, Դաշտաքար գյուղերը և Վեդի քաղաքը, որը գտնվում է երևակման տարածքից 9կմ, իսկ մարզկենտրոն Արտաշատը 28կմ հեռավորության վրա:

Լեռնագրական տեսակետից Ուրցաձորի երևակման տարածքը հատում է Ուրծի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան ճյուղավորությունները և գտնվում է 1100-1200մ բացարձակ բարձրությունների վրա:

Շրջանի կլիման խիստ ցամաքային է ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C): տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +6°C - +12°C միջակայքում: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ-ը: Տեղումների առավելագույն քանակը 37մմ է (հունիս ամսին): Անսառնամանիք օրերի թիվը 150-200օր է:

Շրջանի հիմնական ջրային երակը Վեդի գետն է՝ Արաքսի ձախակողմյան վտակներից, երկարությունը 58կմ է, ձախակողմյան խոշոր վտակը Շաղափն է: Ուրցաձորի երևակման տարածքը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում: Շրջանի բուսածածկը ներկայացված է հիմնականում տափաստանային և լեռնաշղթայի տիպերով: Ուրցաձորի երևակման տարածքից 5կմ դեպի հյուսիս-արևելք գտնվում է << Խոսրով >>



անտառ պետական արգելոցը: Բուն երևակման տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ:

Երևակման տարածքի հողերը Ուրցաձոր համայնքի արոտավայրեր են: Ուրցաձոր համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է:

ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր գյուղի՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները գտնվում են Ուրցաձորի երևակման տարածքից զգալի հեռավորությունների վրա, հետևաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը չի կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանների իրավիճակի վրա: Երևակման շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ.Ն.Պաֆֆենհոլցը, Ս.Ս.Մկրտչյանը, Ա.Տ.Ասլանյանը, Լ.Լ.Գաբրիելյանը, Ռ.Ա.Առաքելյանը, Ա.Տ.Վեհունիևը, Ա.Զ.Գրիգորյանը և ուրիշներ:

Ուրցաձորի կավերի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարվելու են 19 հետախուզահորերի միջոցով: Հետախուզացանցի խտության ընտրությունը կատարվելու է ելնելով հանքաերևակման երկրաբանական կառուցվածքից, որն ըստ բարդության պատկանում է 1-ին խմբին: Հետախուզահորերի անցումը պետք է իրականացվի CAT մակնիշի էքսկավատորով: Հետախուզահորերի ընդհանուր ծավալը կկազմի մոտ 100մ: Հետախուզահորերը անց են կացվելու օգտակար հանածոյի մարմնի եզրագծման և նմուշարկման նպատակով: Լաբորատոր փորձարկումները կատարվելու են մասնագիտացված լաբորատորիայում:

Երևակման տարածքում կատարվելու է նաև 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ՝ լեռնային փորվածքների տեղադրմամբ: Տոպոհիմքի վրա կազմվելու են նույն մասշտաբի երկրաբանական քարտեզ կտրվածքներով և կատարվելու է պաշարների սահմանագծում: Ուսումնասիրվող տարածքում կավայի ապարների ելքի սահմանները ճշտելու նպատակով 53.08հա տարածքում անհրաժեշտ են 1:2000 մասշտաբի որոնողական երթուղիներ: Երթուղիների միջև հեռավորությունը նախատեսվում է 10մ:

Երևակման տարածքի կավային ապարների ռադիոակտիվությունը որոշելու համար նախատեսվում է ստուգել ռադիոնուկլիդների կոնցենտրացիան, որը կատարվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից պայմանագրային հիմունքներով: <<ՌԱՈՒՌ>> ՍՊԸ կավային ապարների երևակման ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ մեթոդիկայով:

- երևակման տարածքի համապատասխան մասշտաբի երկրաբանական քարտեզագրում և տոպոհանույթ,
- երկրաբանական և տոպոքարտեզների կազմում, հետախուզահորերի անցում,
- հետախուզահորերի նմուշարկում

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում նախատեսվում է ամփոփ հաշվետվություն պաշարների հաշվարկմամբ և օգտակար հանածոյի տնտեսական արժեքի գնահատմամբ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում առաջանում են վնասակար գազեր և փոշի: Նախնական հաշվարկների համաձայն,



տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի նորմերը: Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են:

Երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներից առաջ կատարվելու է հողաբուսական շերտի կուտակում նախատեսված վայրում: Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումը իրականացվելու է երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.  
-Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահելու), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատ փոսը:

- Օգտագործված յուղերի և քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Համաշ ղետալների և մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

- Կեղտաջրերի հավաքում նորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության միջոցով:

- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

- Մթնոլորտային օդում կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ: Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 250.000 դրամ:

### **ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ**

Այսպիսով երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ << Արարատի մարզի Ուրցածոր համայնքում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:



## Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինաղբի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՌԱՈՒՌ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Ուրցաձորի կավային ապարների երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան